ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

N 1071-Ա/2 «07» հուլիսի, 2021 թ.

ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 4-րդ գլխի 19-րդ կետի 20-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը՝

Հրամայում եմ

1. Կազմակերպել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար հայտերի ընտրության մրցույթ:
2. Հաստատել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար հայտերի ընտրության մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն Հավելված **N** 1-ի:
3. Հաստատել Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման հայտերի ընտրության մրցույթին մասնակցության Հայտի ձևը՝ համաձայն Հավելված **N** 2-ի:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«07» հուլիսի, 2021 թ.
N 1071-Ա/2 հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրին, ինչպես նաև միջազգային այլ ծրագրերին Հայաստանի Հանրապետության գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և բուհերի, ինչպես նաև վերջիններում ընդգրկված գիտական խմբերի և առանձին գիտնականների մասնակցությունը խթանելու նպատակով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեն հայտարարում է ՄՐՑՈՒՅԹ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար: Մրցույթի արդյունքում նախատեսվում է ստեղծել գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոն, որը.

- կհավաքագրի, կվերլուծի և հնարավոր շահառուների շրջանում կտարածի Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը,
- հայտատուներին և ծրագրի հնարավոր շահառուներին կմատուցի խորհրդատվական ծառայություններ՝ Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակում հայտարարված մրցույթներին մասնակցության կարգի և ժամկետների վերաբերյալ,
- կհամակարգի Եվրոպական Միության «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի թեմատիկ ուղղություններով նշանակված ազգային կոնտակտային անձանց աշխատանքը,
- կմշակի միջազգային ասպարեզում գործող դրամաշնորհային այլ ծրագրերի և նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվական բազա:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ գիտության կոմիտե մինչև 2021 թվականի հուլիսի 20-ը:

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍՆ ի
«07» հուլիսի, 2021 թ.
N 1071-Ա/2 հրամանի

ՀԱՅՏ

ԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Կազմակերպության անվանումը _____
(հայերեն, անգլերեն, ռուսերեն)
2. Գործունեության ոլորտը _____
3. Կազմակերպության տնօրենի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   (հայերեն, անգլերեն, ռուսերեն)
   - գիտական աստիճանը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Կազմակերպաիրավական ձևը (ՊՈԱԿ, ՓԲԸ, Հիմնադրամ և այլն)
   _____
5. Գերատեսչությունը _____
6. Պահանջվող հաստիքների քանակը _____
7. Պահանջվող ֆինանսավորման ծավալը _____ հազար դրամ
8. Կենտրոնի տնօրենի ստորագրությունը _____
9. Գերատեսչության ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 20 թ. Կ. Տ.

1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ*

---

* *Ներկայացնել Կենտրոնի գիտական, գիտատեխնիկական կամ գիտատեխնոլոգիական գործունեությանն աջակցության ծրագրի տեսլականը, հիմնական դրույթները և համառոտ բովանդակությունը: Հիմնավորել Կենտրոնի կողմից իրականացվելիք աշխատանքների ուղղության (ուղղությունների) և դրանց իրագործման համար անհրաժեշտ կատարողների կազմը: Նկարագրել Կենտրոնի ստեղծման, պահպանման և/ կամ զարգացման համար առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները, միջազգային, այդ թվում՝ ԵՄ գիտական, գիտատեխնիկական, գիտատեխնոլոգիական կամ նորարարական ծրագրերին աջակցության ուղղությամբ Կազմակերպության և կատարողների ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները: Հնարավորության դեպքում ակնկալվող արդյունքները ներկայացնել չափելի մեծություններով (մինչև 7 էջ):*

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

հ/հ	Պաշտոն	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)	Հաստիքների քանակ	Ընդհանուր աշխատավարձ (հազար դրամ)
1.				
2.				

Կազմակերպության տնօրեն՝ _____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Գերատեսչության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

«____» _____ 2021 թ. Կ. Տ.

3. ԿԵՆՏՐՈՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

h/h	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը հազար դրամ)
1.	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	
2.	Տնտեսական ծախսեր, այդ թվում՝ ա) էներգետիկ ծառայություններ, բ) կոմունալ ծառայություններ, գ) կապի ծառայություններ	
3.	Այլ ծախսեր, այդ թվում՝ ա) գույք և սարքավորումներ, բ) նյութեր և միջոցներ, -------	
4.	Ընդամենը	

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

«____» _____ 2021 թ. Կ. Տ.